

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԻՊՐՈՍԵՆՈՒ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՍԱՅՈՒՄԸ ԲԱՑՕԹՅԱ ԴԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

<< ԳԱՍ Գ.Ա. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Վերջին տարիներին հանրապետությունում տիրող տնտեսական ճգնաժամի և հողի սեփականաշնորհման պատճառով դեկորատիվ ծառերի ու թփերի տնկարանների աշխատանքները, ինչպես նաև նորերի հիմնումը աչքաթող է արված:

Հիդրոպոնիկան հնարավորություն է տալիս խնայել հողային ռեսուրսները և շատ կարճ ժամկետում (1-2 տարում), կազմակերպել տնկանյութի արագացված արտադրություն, ինչը հնարավորություն կընձեռի վերականգնելու օրեցօր նոսրացող կանաչ պուրակները: Այդ նպատակով ուսումնասիրվել է կիպրոսենու տնկիների ստացման հնարավորությունը և արդյունավետությունը անհող մշակույթի պայմաններում:

Սովորական կիպրոսենին (*Ligustrum vulgare* L.) պատկանում է ծիթենազգիների ընտանիքին, խտատերև, ճիպտանման խոշոր թփուտ է: Ծաղկում է ամռանը, ծաղիկները պարունակում են թանկարժեք եթերայուղ: Շնորհիվ այն բանի, որ կիպրոսենին հեշտությամբ ենթարկվում է ձևավորման, այն հաջողությամբ օգտագործում են քաղաքաշինության մեջ՝ եզրագարդեր, ցանկապատեր, ծառուղիներ ստանալիս (1): Կիպրոսենու նկատմամբ ունեցած մեծ պահանջարկը, սակայն, բավարարվում է միայն մասամբ, որովհետև տնկանյութի արտադրության ներկա մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Կիպրոսենին բազմացնում են կտրոններով և սերմերով: Կիպրոսենու և, ընդհանրապես, թփուտների տնկանյութի հողային մշակումը խիստ աշխատատար է, իսկ տնկիների ելանքը միավոր մակերեսից՝ շատ ցածր (2-3): Սովորական եղանակի դեպքում 1 հեկտարի վրա տնկարկվում է 28-50 հազար կտրոն, երբեմն կիրառում են ժապավենածև տնկարկը, որը հնարավորություն է տալիս տնկարկել 75-90 հազար կտրոն (5):

Կիպրոսենու կտրոնները մթերում են վաղ գարնանը և խրամատավորում (4): Նախապես խրամատավորված կտրոններից գարնանը պատրաստել ենք 12-15 սմ երկարությամբ, 6-8 հատ կտրոններ: Տնկարկը կատարվել է ապրիլ ամսին, երբ լցանյութի ջերմաստիճանը եղել է 5-10 °C: Կտրոնների ֆիզիոլոգիական խոնավությունը ապահովելու համար տնկարկից առաջ դրանք 12-14 ժամ պահել ենք ջրի մեջ: Փորձարկվել են հետևյալ լցանյութերը. գլաքար, գլաքար + հրաբխային խարամ, հրաբխային խարամ, հրաբխային խարամ + 50 % գետի ավազ: Տնկարկը կատարվել է 80, 100, 120 կտրոն 1 քառ.մետրին սխեմայով: Սննդարար լուծույթը տրվել է գարնանը և ամռանը օրեկան 1-2, իսկ աշնանը՝ մեկ անգամ, որն աստիճանաբար պակասեցնելով հասցվել է տասնօրյակում մեկ անգամի: Բույսերի շիվերի հասունացման (փայտացման) և ձմեռման նպատակով, աշնանը սննդարար լուծույթից ամբողջապես հանվել է ազոտը:

Վեգետացիայի ընթացքում փորձի բոլոր տարբերակներում կատարվել են ֆենոլոգիական դիտարկումներ և բիոմետրիկ չափումներ:

Ստացված արդյունքները (աղ. 1) պարզորոշ ցույց են տալիս, որ կտրոնների կաջողականությունը ըստ փորձարկված լցանյութերի, տնկարկի խտության և աճի ուժգնության եղել է տարբեր: Լավագույն կաջողականություն է ապահովել հրաբխային խարամ + 50 % գետի ավազ տարբերակը (91-95 %): Դա բացատրվում է լցանյութի բարձր ջրակլանողությամբ և քիչ տաքացմամբ: Գլաքարը՝ կլանելով համեմատաբար քիչ ջուր և շատ տաքանալով, կաջողականության ցածր տոկոս է ապահովում, թեև նպաստում է տնկիների ինտենսիվ աճին:

Փորձարկված լցանյութերից և խտություններից կիպրոսենու արմատակալների արտադրության համար օպտիմալ են գլաքար + 30 % հրաբխային խարամ, հրաբխային խարամ և հրաբխային խարամ + 50 % գետի ավազ տարբերակները, որոնք 1 քառ.մետրին 120 կտրոն տնկարկի դեպքում 1 հեկտարի հաշվով ապահովում են մեկ միլիոնից ավելի տնկի, հողայինի մոտ 200 հազարի դիմաց:

Ընդհանրապես, տնկարաններում կտրոնների տնկման խտությունը կախված է տվյալ հողակլիմայական պայմաններից, մշակվող բույսերի կենսաբանական առանձնահատկություններից, կիրառվող ագրոտեխնիկայից և այլն (3, 4): Անհող մշակությամբ բույսերի տնկման խտության և միջբույսային տարածության հարցը վերացվում է, քանի որ այս դեպքում միջշարքային փխրեցման, քաղհանի, պարարտացման, ջրման և այլ աշխատանքների համար տարածք չի պահանջվում: Այս հանգամանքը թույլ է տալիս լիարժեք օգտագործել հիդրոպոնիկոնների տարածքը, դրանով իսկ բարձրացնելով միավոր մակերեսի արդյունավետությունը:

Աղյուսակ 1

Տարբեր լցանյութերի և տնկարկման խտության ազդեցությունը սովորական կիպրոսենու կտրոնների կաշողականության, աճի և տնկիների ելքի վրա

Լցանյութ	Կտրոնների քանակը, հատ/մ ²	Կաշողականությունը, %	2 տարեկան տնկիների աճը			Տնկիների ելքը, հատ/հա
			բարձրությունը, սմ	ճյուղերի քանակը, հատ	հիմնական ճյուղի հաստությունը /կենտրոնում/, մմ	
Գլաքար	80	78	92	3	8.4	624000
	100	82	103	2	7.1	820000
	120	77	107	2	6.8	924000
Գլաքար + 30 % հր. խարամ	80	81	90	3	9.2	648000
	100	79	98	3	8.4	790000
	120	84	105	2	8.1	1,008000
Ջր. խարամ	80	86	86	3	8.0	688000
	100	82	90	2	7.6	820000
	120	88	92	2	7.2	1,056000
Ջր. խարամ + 50 % գետի ավազ	80	95	98	3	7.4	760000
	100	92	102	3	7.1	920000
	120	91	112	3	6.8	1,092000
Չող (ստուգիչ)	30	72	58	2	4.1	198000

Սովորական կիպրոսենու հիդրոպոնիկ և հողային մշակույթների համեմատության դեպքում պարզվում է, որ աճի ուժգնությամբ և բերված մյուս ցուցանիշներով անհող մշակույթը զգալիորեն գերազանցում է վերջինիս: Բացի այդ, շնորհիվ առավել ինտենսիվ աճի, բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում աճեցված կիպրոսենու յուրաքանչյուր արմատակալից կարելի է ստանալ 4-6 լիարժեք կտրոն հետագա բազմացման համար, ինչը հողում բացառվում է:

А.А.Овсеян, С.А.Элоян, А.К.Варданян

ПОЛУЧЕНИЕ ПОСАДОЧНОГО МАТЕРИАЛА ОБЫКНОВЕННОЙ БИРЮЧИНЫ В УСЛОВИЯХ ОТКРЫТОЙ ГИДРОПОНИКИ

Резюме

Показано, что в условиях открытой гидропоники с 1 га можно получить один миллион саженцев бирючины обыкновенной, против 200 тыс. шт. в почвенных условиях. Кроме того, от каждого гидропонического саженца можно получить от 4 до 6 шт. черенков, что в почвенных условиях исключается.

GROWING OF PLANTING MATERIAL OF COMMON PRIVET (LIGUSTRUM VULGARE L) IN OPEN-AIR HYDROPONIC CONDITIONS

Summary

It is shown that in hydroponics it is possible to obtain about 1 million saplings/ha of Common Privet, whereas in soil we never get more than 200 thousand/ha. Besides, every hydroponic sapling can give 4-6 cuttings for further reproduction. The latter is impossible under soil conditions.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Լ.Վ. Զո շրջապատի թփերը. Սովետական գրող հրատ., Երևան: 1984, էջ 112-113:
2. Алексеевский А.Н. Питомники декоративных деревьев и кустарников. М.: Издательство литературы по строительству, 1965, 346 с.
3. Ву А.Б. и др. Передовая организация работ и агротехника по зеленому строительству. М.: 1972, с. 52-84.
4. Григорян А.А. Ценные виды деревьев и кустарников лесов Армении. Ереван: 1973, 230 с.
5. Ермаков Г.С. Размножение древесных и кустарниковых растений зеленым черенкованием. Кишинев: Штиинца, 1981, 222 с.

Դրամ հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով	Բացարձակ պատկեր հազարներով
122.1	1.46	0.550	2.43	0.50	8.38	10	Գր.
123.4	1.53	0.552	2.45	0.50	100.3	15	Գր.
0.88	0.90	0.540	2.46	0.50	8.38	10	Գր.
0.95	0.97	0.541	2.47	0.50	100.4	15	Գր.